# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Արգավանդ Կահույք ՍՊԸ-ն ՀԱԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-221/24 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի<br>տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | 1. Սեղան ղեկավարի՝ լրակազմով: Լրակազմի մեջ մտնում են աշխատանքային սեղան՝ 1 հատ, կողադիր՝ մեկ հատ, դիմադիր՝ մեկ հատ և գզրոց՝ մեկ հատ: Պատրաստված լամինացված ԴՍՊ-ից (0190) և ՄԴՖ–ից (P306), որի հաստությունը 18մմ-ից, լամինատի բաց մասերը եզրակալված ինքնակպչուն եզրաժապվենով, ձախ կողմում 3 բացվող դարակ՝ համապատասխան բարձր որակի մետաղյա բռնակով և փականով, ինչպես նաև բարձր որակի ուղղորդիչներով, սեղանի և կողադիրի երեսը հաստացված է ՄԴՖ պրոֆիլներով: Սեղանի չափսերն են՝ երկարություն 200 սմ, լայնությունը 90 սմ, բարձրությունը 75սմ: Դիմադիրի չափսերն են՝ երկարություն 90- սմ, լայնությունը 60սմ, բարձրությունը 75սմ, Կողադիրի չափսերն են՝ երկարություն 90սմ, լայնությունը 45սմ, բարձրություն 45սմ, Գզրոցի չափսերն են՝ երկարություն 40սմ, լայնություն 45սմ, բարձրությունը 60սմ: Գույնը և տեսքը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ:" 2. Գրապահարաններ, զգեստապահարան (լրակազմում 1 հատ): Վերևի հատվածում երկու ապակեպատ (մգեցված) դռներով և երեք համաչափ բաժանված դարակներով: Ներքևում ՄԴՖ–ից երկու դուռ, որոնք փակվում են բանալիով, ներսում հորիզոնական ուղղությամբ բաժանված 2 մասի, 70սմ բարձրությամբ: Կունենան բարձր որակի մետաղյա բռնակներ, ծխնիները՝ բարձր որակի: Լամինատի բաց մասերը եզրապատված է ինքնակպրուն եզրաժապավենով: Գույնը, դռների բացվածքը, բռնակները, դիզայներական լուծումը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ: Զգեստապահարանը բաղկացած է լամինացված ԴՍՊ–ից (0190) և Մդֆ–ից (P306); Զգեստապահարանը վերևի մասում ունի գլխարկների համար նախատեսված դարակաշար: Դարակաշարից 7սմ ներքև կլինի մետաղական կախիչներ՝ նախատեսված վերարկուների համար: Գրապահարանի |

| | |
|---|---|
| | չափսերն են՝ երկարությունը 80սմ, լայնությունը 45սմ, բարձրությունը 200սմ: Նյութը՝ լամինատ, որի հաստությունը 18 մմ: Զգեստապահարանի Չափսերն են՝ Երկարություն 45սմ, լայնություն 45սմ, բարձրություն 200սմ: 3. Լրագրասեղան: Լրագրասեղանը (լրակազմում 1 հատ) պատրաստված է լամինացված ԴՍՊ–ից (0190) և ՄԴՖ–ից (P306): Լրագրասեղանի բաց հատվածները եզրակալված է ինքնակպչուն եզրաժապավենով: Սեղանի երեսը պատրաստված է Մդֆ–ից եզրակալված Մդֆ–ից Պրոֆիլներով: Չափսերն են 100/60/45 (Ե/Լ/Բ):±3 4. Ղեկավարի բազկաթոռ՝ (լրակազմում 1 հատ) հինգ անվակների վրա՝ միմյանց կապակցված հինգ թևանի խաչուկով, երեսպատած բնական փայտով: Ոտքերը ՝ մետաղյա, պատված բնական փայտով: Նստատեղը և թիկնակը՝ փափուկ՝ սպունգով պատված: Կողային հենակները՝ բնական փայտ: Թիկնակը՝ կարգավորվող, նստատեղը՝ բարձրացնելու և իջեցնելու հնարավորությամբ: Նստատեղի լայնքը՝ 50սմ, խորությունը՝ 47սմ: Բազկաթոռի բարձրությունը՝ գետնից մինչև թիկնակի վերին հատվածը (բարձրացված վիճակում) 120սմ: Պաստառապատված բնական կաշվից: մեխանիզմը երրորդ կարգի ըստ germany DIN 4550 ստանդարտի, բարձրությունը կարգավորող և ճոճվող, կունենա ամրակցման հնարավորություն, անիվները նեյրոնե BIFMA 5,1 (ԱՄՆ) ստանդարտի: Ծանրաբեռնվածությունը 120կգ: Ապրանքները կլինեն չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը և հավաքումը (ներառյալ անհրաժեշտ բոլոր նյութերը) կիրականացնի Վաճառողը՝ իր միջոցների հաշվին՝ նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն: Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում ապրանքներն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1 տարի: Ապրանքների արտաքին տեսքը, գույնը նախապես կհամաձայնեցվի պատվիրատույի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

АРГАВАНД МЕБЕЛЬ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-221/24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | |